ՀՌԻՓՍԻՄՅԱՆ ԿՈՒՅՍԵՐԻ՝ ՀՌՈՄԻՑ ՓԱԽՈՒՍՏԻ ԴԻՄԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի դասախոս
էլփոստ՝ khachatryan08@mail.ru

Այս աշխատանքում հիմնավորվում է, որ Հռիփսիմյան կույսերը Հռոմից փախուստի դիմել և Հայաստան են եկել ոչ թե Դիոկղետիանոսի կամ մեկ այլ կայսեր կամ իմպերատորի կողմից Հռիփսիմե կույսին անհատապես հետապնդելու, այլ այդ իմպերատորի կողմից 295թ. հրապարակած «Ամուսնության մասին», «Հարկերի մասին» և 297թ. «Մարդահամարի մասին» էդիկտների ու դրանց գործողության պատճառով: Համաձայն «Ամուսնության մասին» օրենքի՝ Հռիփսիմեն և այլ երիտասարդ կույսեր կամ այրի կանայք որդեծնության նպատակով պարտավոր էին ամուսնանալ և որպես արհեստագործությամբ զբաղվորներ՝ վճարել գլխահարկ և եկամտահարկ: Թեև նրանց վանքը եղել է արհեստագործական, բայց արհեստով զբաղվել են քչերը: Դրա եկամուտը եղել է չնչին՝ ուղղված միայն կույսերի գոյության պահպանությանը, որպեսզի կարողանան շրջել և քարոզել ավետարանները: Եվ դրա նպատակը չի եղել շահույթ ստանալը, բարեկեցիկ կյանք վարելը, ինչպես սովորական տնտեսվարման դեպքում է: Դրա համար նրանք չէին կարող հարկեր վճարել: Մարդահամարի օրենքի համաձայն՝ հարկահանները «բացառիկ անխղճությամբ»[1] են վերաբերվել հարկատուներին, ուստի սուրբ կույսերի միակ ելքը մնացել է Հռոմեական իմպերիայից փախուստի դիմելը և Հայաստան գալը: Հռիփսիմեն էլ հետապնդվել է ոչ թե անհատապես, այլ որպես աղջիկ, որը պարտավոր էր ամուսնանալ որդեծնության նպատակով: Հայաստանում էլ Հռիփսիմեի, Գայանեի և այլ ճգնավոր կանանց հետ տեղի է ունեցել այն շրջադարձային դեպքը, որը ցնցել է Հայաստանն ու ամբողջ աշխարհը՝ առիթ դառնալով քրիստոնեական մեծ հեղափոխության:

Բանալի բառեր՝ *Ագաթանգեղոս, Դիոկղետիանոս, Մաքսիմինոս Դազա, Կոնստանտին Մեծ, Տրդատ Երրորդ, Գրիգոր Լուսավորիչ, Հռիփսիմե, Հռոմեական իմպերիա, Մեծ Հայաստան:*

---

[1] Буркхардт Я., նշվ. աշխ., էջ 164:

Հռիփսիմյան կույսերի փախուստը Հռոմից, Հայաստան գալու և այնտեղ եղերական մահ ընդունելու պատմությունը շարադրված է Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկի առաջին գրքում՝ «Սուրբ Գրիգորի վարքը և պատմությունը» (137-311-րդ պարբերություններ)[1]: Նրանց պատմությունն առկա է նաև «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» վկայաբանության մեջ՝ գրի առնված Մ. Խորենացու կողմից[2]: Դրանց հիման վրա Ղ. Ալիշանը գրել է «Արշալոյս քրիստոնեութեան հայոց»[3] աշխատությունը: Հռիփսիմյան կույսերի եղերական մահվան թեմատիկան կարմիր թելի նման անցնում է Գրիգոր Լուսավորչի «Հաճախապատում ճառք» աշխատության համարյա բոլոր ճառերի միջով[4]: Ագաթանգեղոսը վկայում է, որ նշված ճառերը գրվել են հենց այդ դեպքերի ազդեցության տակ[5]: Նոր ժամանակներում եկեղեցական, պատմական և գրականագիտական աղբյուրներում սուրբ կույսերի փախուստի, Հայաստան գալու և այնտեղ զոհվելուն վերաբերող հարցերը ևս քննարկվել են, բայց այդ դեպքերի, հատկապես Հռոմից փախչելու, իրական պատճառները, իմաստը, արժեբանական ու բախտորոշ նշանակությունը չի բացահայտվել[6]:

Հռիփսիմյան կույսերի պատմությունը համարվել և համարվում է սրբերի սովորական վկայաբանություն, կրոնական բովանդակություն ունեցող շարքային պատմվածք, առասպել, իսկ Ագաթանգեղոսը՝ սրբերի վարքագիր, դրա կանոններով այս կույսերի, ինչպես նաև Գրիգոր Լուսավորչի վկայաբանությունը հյուսած, վկայաբանության ժանրի կանոններին համապատասխան չափազանցված, հրաշքներով ու տեսիլներով ուղեկցվող, պրոպագանդիստական ու ագիտացիոն նպատակներ հետապնդող աննշան պատմություններ: Դրանք համարվում են ոչ իրական, իսկ եթե իրականում տեղի ունեցած, ապա որևէ առանձնահատուկ նշանակություն չունեցող: Ագաթանգե-

---

[1] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, , աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 84-143:

[2] Մովսես Խորենացի, Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց //Մատենագիրք հայոց, Ա հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2193-2194:

[3] Ղևոնդ Ալիշան, Արշալոյս քրիստոնեութեան հայոց, Վենետիկ, 1902, էջ 110-136:

[4] Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 3-137:

[5] Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 132:

[6] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Բեյրութ, 1959, էջ 79-83, Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, Երևան, հ. 2, ՀՀ ԳԱ հրատ., 1984, էջ 71-80, Մանանդյան Հ., Երկեր, հ. 2, երևան, 1978, էջ 120-141, Լեո, Հայոց պատմություն, հ. 1-ին, Երևան, 1947, էջ 414-428, Մկրտչյան Ա., Հինգերորդ դարի հայ դպրություն, Երևան, «Հայաստան, 1968, էջ 195-209, Մալխասյանց Ստ., Երբ են հայերն ընդունել քրիստոնեություն, էջմիածին, 1944, № 1, էջ 22-26:

ղոսն էլ դիտվում է ոչ թե այդ անձանց և նրանց հետ կապված պատմական դեպքերի ժամանակակիցն ու ականատես-վկան, այլ դրանցից 170-180 տարի հետո հանդես եկած, դրանց մասին լսած և գրի առած կրոնական մի վարքագիր: Նրա երկի գիտակ համարվողներից մեկը Հռիփսիմյան կույսերի պատմությանը նվիրում է ընդամենը մի քանի տող՝ գրելով. «Հռիփսիմյան վկայաբանության մեջ դժվար թե որևէ իրական պատմական բան լինի: ...Դա մի զրույց է վկայաբանության ձևով գրված»[1]: Մեկ ուրիշն էլ գրում է, որ «Ագաթանգեղոսը համառորեն աշխատում է համոզել, որ Հռիփսիմյանները, որպես պատմական անձնավորություններ, գոյություն են ունեցել»[2]:

Իրականում Ագաթանգեղոսը վկայագիր կամ վարքագիր չէ, այլ մեծ կրոնական փիլիսոփա, իրավաբան և պատմագիր: Նրա հետ չի կարող համեմատվել արևմտյան եկեղեցու և ոչ մի ջատագով: Նա եղել է Տրդատ Երրորդ Մեծ թագավորի դպիրը, Հռիփսիմյան կույսերի հետ կապված դեպքերի, հայոց պետության և իրավունքի քրիստոնեացման ականատեսը, մասնակիցն ու պատմիչը[3]: Իսկ նրա գրառած Հռիփսիմյան կույսերի պատմությունը ոչ թե սովորական վկայաբանություն է, այլ պատմական նշանակալից ու բախտորոշ դեպքի նկարագրություն, որն առիթ ու պատճառ է դարձել հայոց քրիստոնեական մեծ հեղափոխության և աշխարհում առաջին քրիստոնեական պետության ու իրավական սիստեմի առաջացման: Նրա վկայությունների համաձայն՝ Գրիգոր Լուսավորչին Խոր Վիրապի (մահվան) դատապարտելուց հետո (283թ.), հայոց Տրդատ Երրորդ Մեծ Արշակունի արքան երկու հրամանագրեր (հրովարտակներ) է հրապարակել, որոնցով արգելել է Քրիստոսի ուսմունքի և քրիստոնեական հավատի քարոզչությունը Հայաստանում: Քրիստոնյաները հայտարարվել են հանցագործներ: Հրամայվել է նմաններին կապված վիճակում ներկայացնել «արքունի դուռ», դատել և դատապարտել մահվան, իսկ ունեցվածքը հանձնել նրանց մատնող-

---

[1] Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, վեց հատորից, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1944, էջ 163:

[2] Ա. Մկրտչյան, Հինգերորդ դարի հայ դպրություն, Երևան, «Հայաստան, 1968, էջ 199:

[3] Խաչատրյան Ս. Ա., Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը, Երևան, «Իրավունք», 2010, նույնի՝ «Հաճախապատում ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ (քննություն ապացուցման տեսության հիման վրա), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1919, նույնի՝ «Հաճախապատում ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ, երկրորդ հրատ., Երևան, «Լուսաբաց», 2000, նույնի՝ Ընդունողականությունը որպես զրադաշտական և վաղքրիստոնեական իրավունքի սկզբունք, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019:

ներին ու մերկացնողներին: Այս հրամանագրերը հետագայում դարձել են պատճառ և օրինակներ, որոնց հիման վրա իմպերատոր Դիոկղետիանոսը 298, 303-304թթ. հրապարակել է իր նշանավոր օրենքները կամ էդիկտները քրիստոնյաների դեմ[1]: Դրանից հետո Տրդատ Երրորդ արքան՝ դաշնակցած հռոմեական կայսրերի ու զորավարների հետ, երկար տարիներ պատերազմել է, որի արդյունքում հռոմեական իմպերատորներ Դիոկղետիանոսի ու Գալերիոսի օգնությամբ նրան հաջողվել է վերջնականապես ազատագրել Հայաստանը (296թ.) և հաստատվել Մեծ Հայաստանում՝ նստավայր կամ մայրաքաղաք ընտրելով Վաղարշապատը:

Գրիգոր Լուսավորչին դատապարտելուց և այս հակաքրիստոնեական հրամանագրերը արձակելուց 13-15 տարի հետո սկսվում է Հռիփսիմյան կույսերի պատմությունը: Այն սկսվում է իմպերատոր Դիոկղետիանոսին վերագրված մի նորմատիվ հրովարտակից, որի բովանդակությունը մասնակիորեն ներկայացված է Ագաթանգեղոսի երկի 137-րդ պարբերության մեջ: Դրանում ասված է. «Եվ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խնդրեաց իւր կին կայսրն Դիոկղետիանոս» (պատահեց, որ Դիոկղետիանոս կայսրը (իմպերատորը – Ս.Խ.) կամեցավ իր համար կին առնել): Իր այդ հրովարտակում իմպերատորը պահանջում է իրեն ներկայացնել բոլոր գեղեցիկ կանանց պատկերները՝ ընտրության համար: Դրա հիման վրա «տերության բոլոր կողմերը սկսեցին շրջել նմանահան ճարտար նկարիչներ, և դեմքի գեղեցկությունը, մրազարդ հոնքերը ճշգրտորեն, հասակին հարմար, համապատասխան ներկերով նկարում էին տախտակների վրա, որպեսզի դեմ դիմաց ցույց տան թագավորին՝ ի հաճույս նրա»:

Ագաթանգեղոսի երկի 138-րդ պարբերությունից էլ պարզվում է, որ թագավորի ծառաները՝ «նմանահան նկարիչների» հետ գալով Հռոմ քաղաք, այնտեղ գտել են «կույսերի մի արգելավանք...: Նրանց գլխավորի անունն էր Գայանէ, որն ուներ մի սան՝ աստվածապաշտ մարդու դուստրերից՝ թագավորական տոհմից, որի անունն էր Հռիփսիմե»: Ծառաները բռնությամբ մտել են այդ առաքինի կանանց «սուրբ կայաններ», նկարել Հռիփսիմեի պատկերը և հասցրել թագավորին (Դիոկղետիանոսին): Երբ վերջինս տեսել է Հռիփսիմեի գեղեցիկ պատկերը, ապա «լցվել է կատաղի ցանկության տոփանքով, քանզի հիմար, մոլեգին, անկարգ ցանկությունը ստիպում էր»:

---

[1] **Ագաթանգեղոս,** նշվ. աշխ., էջ 78-84, **Խաչատրյան Ս. Ա.,** Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը ..., Երևան, «Իրավունք», 2010:

Անմիջապես էլ նրա կողմից կարգադրություն է արվել «հարսանիքի ուրախության ժամ» նշանակել: Այդ առթիվ դեսպաններ են ուղարկվել հարևան երկրներ, որպեսզի «ամենքը օժիտներ և ընծաներ բերեն... փեսայի կարգը կատարելու՝ ըստ թագավորական օրենքների»[1]:

Երբ «առաքինի կույսերը տեսել են հեթանոս թշնամու գաղտնաձիգ նետերը, որով սովոր էին քրիստոնեական սրբերին ծածուկ հարվածել», ապա նրանք՝ «խուսափելով դիվական մարդկանց խառնակությունից» (պարբ. 149-րդ), և որպեսզի «արժանի լինեն արդարության պսակին» ու «կարողանան տեսնել Աստծուն» Երկնային Արքայությունում՝ փախուստի են դիմել, երկար դեգերումներից հետո հասել Մեծ Հայաստանի Վաղարշապատ մայրաքաղաք և թաքնվել քաղաքամերձ հնձաններում[2]: Իմանալով կույսերի փախուստի մասին՝ Դիոկղետիանոսը ևս մեկ հրովարտակ է հրապարակել, դրա պատճենը ուղարկել հռոմեական բոլոր նահանգապետերին (ինչպես սովորաբար) և հայոց թագավորին՝ պահանջելով գտնել նրանց, մահապատժի ենթարկել, իսկ Հռիփսիմեին վերադարձնել իրեն: Հայոց թագավորին ուղղված նույնաբովանդակ հրովարտակ-էդիկտում էլ վերապահում է արված, որ եթե Հռիփսիմեն նրան հաճելի լինի, ապա կարող է պահել իրեն[3]: Այդ հավելումը հակասում է էդիկտի հրատարակման բուն նպատակին, որը Հռիփսիմեին հայտնաբերելն ու նրան հանձնելն է: Այնուհետև Ագաթանգեղոսն անցնում է սուրբ կույսերի նկատմամբ հայոց թագավորի իրականացրած հետապնդումների, Հռիփսիմե կույսի հետ նրա ամուսնության ու կենակցելու անհաջող փորձի, նրան և նրա շատ ընկերուհիների զրադաշտական դատավարական արարողակարգերով մահապատժի ենթարկելու նկարագրությանը[4]:

---

[1] Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 84-85: Նպատակահարմար ենք գտել այս և այլ որոշ մեջբերումներն Ագաթանգեղոսի երկից կատարել նոր հայերենով՝ դրա իմաստն առավել հասկանալի փոխանցելու համար:

[2] Մովսես Խորենացի, Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց..., էջ 2193-2196, Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 110-136, Յուսիկ Վրդ. Մովսիսյան, Հայաստանեացս առաքելական Ս. Եկեղեցվոյ պատմութիւն, Ա հատոր, Էջմիածին, 2008, Մուրադյան Պ. Մ., Ագաթանգեղոսի,Պատմությանե մի հատվածի հին վրացերեն թարգմանությունը (Հռիփսիմյանց վկայաբանությունը). ՊԲՀ, 1972, № 1, էջ 63-76:

[3] Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 84-85:

[4] Хачатрян С. А., Зороастрийский погребальный обряд над престаупниками в дохристиагской Армении. EESJ. East European scence Journal, № 1 (52), 2020, part 6, Warsaw, Poland, S. 62-67: Նույնի՝ Источники познания зороастрийского права, Сборник научных статьей ГГУ, 2010, № 12, с. 507-517.

Անմիջապես էլ պետք է նկատել, որ Դիոկղետիանոս իմպերատորին վերագրած և նրա կողմից կանանց նկատմամբ տածած «կատաղի ցանկության տռփանքը…, հիմար, մոլեգին, անկարգ ցանկությունը», չի համապատասխանում պատմական ճշմարտությանը և իրողություններին: Նրա ժամանակակից և նրան քննադատող հեթանոս ու քրիստոնյա պատմիչներից և ոչ մեկը նման սեռական հակումների մեջ նրան չի մեղադրում: Ընդհակառակը, նա համարվում է ժուժկալ անձնավորություն[1]: Նա ամուսնացած է եղել մեկ անգամ՝ Պրիսկայի հետ, և ունեցել մեկ աղջիկ՝ Վալերիան: Այդ կանայք եղել են առաքինի վարքի տեր, ընդ որում՝ քրիստոնեուհիներ:

Դրա հետ միասին նման արատավոր վարքագծի մեջ անխնա կերպով մեղադրվում են Դիոկղետիանոսի ընկեր և նրա կողմից Հռոմեական իմպերիայի Արևմուտքի իմպերատոր նշանակված Մաքսիմիանոս Հերկուլիոսը (285—305թթ.), Գալերիոս իմպերատորի կողմից հռոմեական Արևելքի կայսր (305թ.), հետո էլ իմպերատոր (308թ.) նշանակված Մաքսիմինոս Դազան (Դայա): Վերջինս, Գալերիոսի մահվանից հետո (311թ.), դառնալով հռոմեական պետության Արևելքի միահեծան տեր, դրսևորել է բացառիկ անառակ և ցոփ վարքագիծ՝ չհամապատասխանող ինչպես քրիստոնեական, այնպես էլ հեթանոսական բարոյական, կրոնական և իրավական նորմերին:

Մասնավորապես իր «Եկեղեցական պատմություն» երկի 8-րդ գլխում Ե. Կեսարացին Մաքսիմինոս Դազային բնութագրում է հետևյալ կերպ. «Նա զբաղվում էր հարբեցողությամբ, պալատական կեղծավորներին ու քծնողներին նվիրաբերում գանձերի շեղջեր: Ոչ ոք նրա հետ չէր կարող հավասարվել հարբեցողության, ցոփության և անառակության մեջ: Նա դարձել էր չարաբարոյության ուսուցիչ…: Նրա ամոթալի հեշտասիրությունը սահման չուներ: Հնարավո՞ր է արդյոք թվարկել բոլոր նրանց, ում նա խայտառակեց: Նա չէր անցնում ոչ մի քաղաքի կողքով, որում չանպատվեր կանանց և չփախցներ աղջիկների: Կանանցից մեկին, որը Ալեքսանդրիայում բերվել էր այս բռնակալի վավաշոտությունը բավարարելու համար, և ով քրիստոնուհի էր, հաղթեց Մաքսիմինոսի կրքոտ և անսանձ հոգուն՝ իր ամրությամբ: Նա, փառաբանված էր հարստությամբ, տոհմիկությամբ, կրթվածությամբ, բայց դրանք

[1] Римские историки IV века, М., "Российская политическая энциклопедия" (РОССПЭН), 1997, с. 63-66, 112-116; Евсевий Кесарийский. Церковная история, М., 1993; Лактанций, О смертях преследователей, “Алетейя”, 1998;

Князкий И. О., Император Диоклетиан, СПб, «Алетейя», 2010. Սուրբ հայրերի վարքն ու կենսագրությունը, մայր աթոռ Սուրբ Էջմիածին, 2016:

նրա մոտ երկրորդական էին՝ առաքինության նկատմամբ: Նա (Մաքսիմինոս Դազան – Ս.Խ.) աղաչում և խնդրում էր նրան, բայց ի վիճակի չեղավ սպանել նրան, ով պատրաստ էր մեռնելու (բայց չզիջելու): Ավելի շատ պարտված կրքից և զայրույթից, նա նրան պատժեց աքսորով, և նրանից խլեց ունեցվածքը»[1]:

Նույն Մաքսիմինոս Դազայի մասին նրա ժամանակակից Լակտանցիոսը գրում է հետևյալը. «Մաքսիմինոսի ամենասարսափելի հանցագործությունը դա անառակության ծարավն էր: Նրա ներքինիները սպրդում էին ամենուր, և որտեղ որ հայտնաբերվում էր պատշաճ գեղեցկության աղջիկ, ապա նրան խլում էին հորից և ամուսնուց: Բարեծնունդ կանանց վրայից պոկում էին հագուստները, զննում մարմինը, որոնում թագավորական մահճի համար թերություններ: Եթե որևէ մեկը դիմադրում էր, ապա ջրասույզ էին անում...: Բացի դրանից, Մաքսիմինոսը (Դազան) օրենք ընդունեց, ըստ որի ոչ ոք իրավունք չուներ ամուսնանալ առանց նրա թույլատվության, որպեսզի ինքն առաջինը փորձեր նոր ամուսնության բոլոր հաճույքները: Ազատ ծնված աղջիկներին նա հանգստագույնս նվիրում էր իր ստրուկներին՝ որպես կին: Նրա թիկնապահները նմանակում էին նրան՝ իրենց ննջարաններում անխղճորեն կատարելով բռնություններ: Չէ՞ որ նրանց պատժող չկար...»[2]: Լակտանցիոսը սեռական մոլագար և աղջիկներ պղծող է համարում նաև Մաքսիմիանոս Հերկուլիոսին (286-305թթ.): Նա գրում է, որ այս իմպերատորն ունեցել է «...ինչպես տղամարդկանց պղծելու անհագուրդ կիրք, որն ինքնին զզվելի ու զազրելի է, այնպես էլ լավագույն քաղաքացիների դուստրերին: Ինչ արշավանք էլ որ նա կատարեր, դրանց ընթացքում բռնությամբ ծնողներից խլված աղջիկներին տանում և պղծում էր»[3]:

Հարց է առաջանում՝ կարո՞ղ էր արդյոք այս ամենի մասին իմանալ կամ չիմանալ Ագաթանգեղոսը՝ Հռոմում բազմակողմանի կրթություն ստացած մեծ պատմաբանը, իրավաբանը, կրոնագետը և քրիստոնյա աստվածաբանը: Եվ գիտակցաբար կեղծելով Դիոկղետիանոսի հրովարտակը (իսկ այն մասամբ կեղծած է)՝ նրան վերագրեր վերոնշված երկու իմպերատորների ստոր վարքագիծը: Կարո՞ղ էր նա այդպիսով զրպարտել մի մարդու, ում ջանքերով նաև վերականգնվել էր Մեծ Հայաստանի թագավորությունը, իսկ

[1] Евсевий Кесарийский. Церковная история. М., 1993, с. 389-390.
[2] Лактанций. О смертях преследователей. М., “Алетейя”, 1998, с. 221-226.
[3] Лактанций, նշվ. աշխ., էջ 140:

Տրդատ Երրորդը հերթական անգամ եկել իշխանության: Եվ կարո՞ղ էր արդյոք վերջինս, Իրանի դեմ մղված վերջին՝ 285-286թթ. պատերազմում՝ լինելով նաև Դիոկղետիանոսի ենթական, և «առաջնորդն առն և ձիոյ զորացն Յունաց (հռոմեացիների)»[1], թույլ տալ դպիր Ագաթանգեղոսին վարկաբեկել իր մարտական ընկերոջը և հրամանատարին, այլ իմպերատորների զեխ ու անառակ վարքագիծը վերագրել Դիոկղետիանոսին: Ագաթանգեղոսն էլ՝ ապրող Երկնային Արքայություն ընկնելու անեղծ ցանկությամբ, չէր կարող կեղծել պատմությունը, զրպարտել մեծ իմպերատորին: Պարզապես նրա երկի այս, ինչպես նաև շատ այլ հատվածներ, հետագայում խմբագրվել են՝ այն սրբերի վկայաբանության վերածելու նպատակով և այդ ժանրի կանոններին համապատասխան: Դա արվել է նաև այլ մասնավոր, ճղճիմ նպատակներով, որոնք քննարկվել և բացահայտվել են մեր կողմից[2]:

Լինելով հայոց թագավորի դպիրը և քարտուղարը, թագավորական նամակագրությունը կազմակերպողը, ստացվող փաստաթղթերը թագավորին զեկուցողը՝ Ագաթանգեղոսը չէր կարող կեղծել իմպերատորի հրովարտակների իմաստը և նման ստոր ցանկություններ ու վարքագիծ վերագրել Դիոկղետիանոսին: Վերջինս իսկապես էլ եղել է քրիստոնյաներին հետևողականորեն հալածողը: Նրա առաջին հակաքրիստոնեական էդիկտը հրապարակվել է 298 թվականին: Դրանով բոլոր քրիստոնյա զինվորականները հեռացվել են բանակից: Իսկ 303-304թթ. հրատարակվել են նրա հակաքրիստոնեական չորս էդիկտները, որոնցով արգելվել է քրիստոնեական համայնքների գործունեությունը, նրանք հայտարարվել են օրենքից դուրս, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվել է: Սակայն Հռիփսիմյան կույսերը Հռոմից փախուստի են դիմել շատ ավելի վաղ, երբ դեռևս քրիստոնյաների նկատմամբ զանգվածային բռնություններ չկային:

Ինչ վերաբերում է իմպերատորներ Մաքսիմինոս Դազային կամ Մաքսիմիանոս Հերկուլիոսին, ապա նրանց կողմից ևս Հռիփսիմյան կույսերը չէին կարող հետապնդվել, քանզի Մաքսիմինոս Դազան, որպես կայսր և իմպերատոր, պատմական ասպարեզ է իջել բավականին ուշ, 305-313թթ., երբ սուրբ Հռիփսիմեն և նրա որոշ ընկերուհիներ արդեն վաղուց մահացել էին: Նրա սեռական բնույթի արարքներն էլ (որոնք Ագաթանգեղոսի գրքում վե-

---

[1] Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 78-79: Князкий И. О., Император Диоклетиан СПб, «Алетейя», 2010, с. 55.

[2] Խաչատրյան Սամվել, «Հաճախապատում ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ, երկրորդ հրատ., Երևան, «Լուսաբաց», 2000:

րագրված են Դիոկղետիանոսին) կատարվել են Գալերիոսի մահվանից (311թ.) հետո, ում օգնական-կայսրն էր մինչ այդ նա: Բացի դրանից՝ նա եղել է հռոմեական պետության Արևելքի կայսրը, հետո էլ՝ իմպերատորը, և նրա իշխանությունը չի տարածվել Իտալիայի և Հռոմի բնակիչների վրա: Հետևաբար նա չէր կարող հետապնդել Հռոմում բնակվող կույսերին: Դա ևս ապացույց է այն բանի, որ Հռիփսիմյան կույսերի հետ կատարված դեպքերը կատարվել են նրա իշխանության գալուց ավելի վաղ: Ինչ վերաբերում է Արևմուտքի իմպերատոր Մաքսիմիանոս Հերկուլիոսին, ապա նրա կողմից էլ այս կույսերի նկատմամբ նման արարքները հավանական չեն: Ինչպես վկայում է Լակտանցիոսը, նման բռնի արարքներ նա գործել է միայն արշավանքների ժամանակ: Նա միշտ եղել է արշավանքների մեջ, Դիոկղետիանոսի հետ մասնակցել է 296թ. Ալեքսանդրիայում ծագած ապստամբությունը ճնշելուն, որից հետո մնացել այնտեղ շուրջ երեք տարի: Նա նաև սեռական մոտիվներով կանանց հետապնդելու մասին որևէ հրովարտակ չի հրապարակել, հայոց թագավորին չի ուղարկել կատարման, քանզի իմպերիայի Արևելքի վրա որևէ իշխանություն և հայոց թագավորի հետ որևէ կապ չուներ:

Ագաթանգեղոսը, լինելով Հռոմում ապրած, այնտեղ բազմակողմանի կրթություն ստացած մեծ պատմաբան, իրավաբան և քրիստոնյա աստվածաբան, չէր կարող զրպարտել Դիոկղետիանոսին, նրան վերագրել հրովարտակ, որով նա, որպես սեռական մոլագար, ամբողջ իմպերիայի տարածքում օրենքի ուժով որոնել, գտել է գեղեցիկ կանանց ու աղջիկների՝ նրանց հետ ամուսնանալու կամ պղծելու նպատակով, և նրա մոլագար վարքագիծը վերագրել Դիոկղետիանոսին: Եվ այդ ակտն ակնհայտորեն հիշեցնում է Մաքսիմինոս Դազայի «Ամուսնության մասին» հրովարտակը կամ էդիկտը:

Դիոկղետիանոսին վերագրվող նշված հրովարտակի պրեամբուլը և նկարագրական մասի առաջին հատվածը իսկապես էլ կարող էր լինել այդ իմպերատորին վերաբերող: Այն համարյա նույնությամբ վերատադրված է Տրդատ Երրորդի հակաքրիստոնեական հրամանագրի կամ հրովարտակի համապատասխան մասին: Իսկ դրա երկրորդ հատվածը՝ վերաբերող իմպերատորի ծառաների կողմից սուրբ կույսերի արգելավանք մտնելուն և Հռիփսիմեին նկարելուն, նրան ու նրա ընկերուհիներին հետապնդելուն, ապա դա ավելի շատ վերագրելի է սեռական մոլագար Մաքսիմինոս Դազայի գործելակերպին և նրա «Ամուսնության մասին» հրովարտակին, որով փաստորեն առաջին գիշերվա իրավունք է սահմանվում: Այդպիսի հրովարտակ Մաքսի-

մինոս Դազայի կողմից իսկապես էլ ընդունված է եղել, և դա՝ ավագ իմպերատոր Գալերիոսի մահվանից (311թ.) հետո, երբ սուրբ կույսերն արդեն վաղուց զոհվել էին, իսկ Մաքսիմինոս Դազան դարձել էր հռոմեական իմպերիայի Արևելքի լիիրավ տիրակալը: Մինչև 311թ., լինելով Գալերիոսի օգնական-կայսրը, նա իրավունք չի ունեցել օրենսդրել: Բացի դրանից, լինելով այդ իմպերիայի Արևելքի կայսր, հետո էլ՝ իմպերատոր (311թվ.), նա որևէ իրավունք չի ունեցել իմպերիայի արևմտյան նահանգների, այդ թվում՝ Հռոմ քաղաքի վրա, և չէր կարող հետապնդել այդ քաղաքում բնակվող սուրբ կույսերին: Այսպիսով, Սուրբ կույսերի փախուստը պայմանավորված չի եղել և չէր կարող լինել Մաքսիմինոս Դազայի հետապնդումներով: Վերոգրվածից հետևում է, որ Ագաթանգեղոսի երկում առկա Դիոկղետիանոսին վերագրվող հրովարտակը կամ էդիկտը կույսերի, այդ թվում՝ Հռիփսիմեին հետապնդելու մասին, իսկապես էլ կեղծած և ձևափոխված է և դրա նկարագրական մասի երկրորդ հատվածում և վերջաբանում արտացոլված է այդ մոլագար իմպերատորի վերոնշված էդիկտը՝ գեղեցիկ կանանց հետապնդելու, և հայտնաբերելու դեպքում իրեն ներկայացնելու մասին:

Հասկանալի է, որ նման կեղծիք կարող էր կատարել Ագաթանգեղոսի երկը հետագայում խմբագրողը, այնպիսի մեկը, ով չի եղել նշված դեպքերի ժամանակակիցը, մոտիկից ծանոթ չի եղել նշված իմպերատորների կյանքին ու գործին: Եվ դա կատարվել է այն հաշվարկով, որ եթե Դիոկղետիանոսը եղել է քրիստոնյաներին դաժան կերպով հալածող, ապա կարող էր դա անել նաև սուրբ կույս Հռիփսիմեի, ու նրա ընկերուհիների նկատմամբ: Բայց դա այդպես չէ: Վերջինիս կողմից քրիստոնյաների դեմ հալածանքները սկսվել են 298թ. ընդունած հակաքրիստոնեական առաջին էդիկտով: Սակայն այն կանանց չի վերաբերել: Դրա հիման վրա ռեպրեսիաների են ենթարկվել միայն քրիստոնյա զինվորականները[1]: Հիմնական հալածանքները քրիստոնյաների դեմ նրա կողմից սկսվել են 303-304թթ., երբ նա հրատարակել է իր չորս հակաքրիստոնեական նշանավոր էդիկտները, սակայն դրանք վերաբերելի չեն սուրբ կույսերին, քանզի նրանք արդեն զոհվել էին դրանց հրապարակումից շատ առաջ: Հետևաբար նրանց փախուստը Հռոմից ոչ մի կապ չունի նաև Դիոկղետիանոսի նշված էդիկտների հետ:

Այս դեպքում նորից ծառանում է հարցը, որ եթե այդպես է (իսկ դա այդպես է), ապա ինչու և երբ են իրականում Հռիփսիմյան կույսերը փա-

[1] Буркхард Якоб., Век Константина Великого, М., «Центрполиграф», 2003, с. 134.

խուստի դիմել Հռոմից, ինչ պատճառներով, եթե ոչ սեռական հետապնդումների: Առայժմ պարզ է միայն, որ նրանք փախուստի են դիմել Դիոկղետիանոսի իշխանության տարիներին: Ու քանի որ Հայաստանում քրիստոնեական մեծ հեղափոխությունը և քրիստոնեական պետության ու իրավունքի հաստատումն այդ երկրում տեղի է ունեցել նրանց եղերական մահվան պատճառով, ապա կարելի է պնդել, որ նրանք Հռոմից փախուստի են դիմել և Հայաստան եկել մինչև Դիոկղետիանոսի հակաքրիստոնեական այդ էդիկտները: Ըստ Ղևոնդ Ալիշանի, նրանք Հռոմից փախուստի են դիմել 293 թվականին, և երկար տարիներ դեգերելով՝ բուն Հայաստան հասել ու նահատակվել 301թ.: Նրա կողմից ևս փախուստի պատճառ է դիտվում Դիոկղետիանոսի կողմից գեղեցիկ աղջիկներին, մասնավորապես՝ կույս Հռիփսիմեին, հետապնդելու հանգամանքը: Եվ դա՝ ամուսնության նպատակով[1]: Սակայն դրանք սոսկ ենթադրություններ են՝ ոչնչով չհիմնավորված: Մ. Օրմանյանը կույսերի փախուստի թվականի, դրա պատճառների, ինչպես նաև նրանց Հայաստան հասնելու հարցն ընդհանրապես շրջանցում է, նրանց պատմությունը սկսում Հայաստանում գտնվելու ու զոհվելու ժամանակից, որը, նրա կարծիքով, 301 թիվն է: Փախուստի պատճառն էլ նույնն է՝ Հռիփսիմեի նկատմամբ Դիոկղետիանոսի հարուցած հալածանքները[2]: Ինչ վերաբերում է արհեստավարժ պատմաբաններին, ապա, ինչպես արդեն ասվել է, նրանց կողմից այդ դեպքերին որևէ լուրջ նշականություն տրված չէ, և նրանց կողմից դրանք քննության առարկա չեն դարձել:

Այս հարցում ճշմարտությունը պարզելու համար պետք է նախ դիմել Մովսես Խորենացու գրառած «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» վարքի 12-13-րդ տներին: Դրանցում հպանցիկ կերպով անդրադարձ է կատարվում կույսերի փախուստի պատճառին և ասվում հետևյալը. «Այլ և հասանել յուզման ժամանակին, վասն ազնուական ազգին և սքանչելատեսիլ գեղոյն, որ և յաշխարհի փայլէր հոգւով, խորհեին առնուլ ի պատիվ տանն հռոմայեցւոց ի թագուհութիւն տիեզերապետութեան»[3]: Ինչպես դա ակնհայտ է, կույսերի փախուստը վերագրվում է այդ ժամանակներում տեղի ունեցած ինչ-որ «յուզման ժամանակի»: Ակնարկ կա նաև այն մասին, որ այդ փախուստի պատճառը եղել է այն, որ ինչ-որ կարող ուժեր «խորհել են» Հռիփսիմեին բարձ-

[1] Ղևոնդ Ալիշան, Արշալոյս քրիստոնեութեան հայոց, Վենետիկ, 1902, էջ 113:
[2] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Բ. Գ., Բեյրութ, 1959, էջ 79-83:
[3] Մովսես Խորենացի, Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց, էջ 2193-2196:

րացնել «ի թագուհութիւն տիեզերապետութեան»[1]: Նշված վարքի 25-րդ տանը կրկին վկայված է, որ կույսերի փախուստը Հռոմից կատարվել է իմպերիայում տեղի ունեցած հուզումների պատճառով, և դա՝ Դիոկղետիանոսի օրոք:

Իսկապես էլ, այս իմպերատորի տիրակալության ժամանակ, Հռոմեական իմպերիայում հուզումներ են եղել, որոնք կապված են եղել ամուսնաընտանեկան և հարկային ոլորտներում 295-297թթ. նրա իրականացրած ռեֆորմների, դրանց կապակցությամբ ընդունած նորմատիվ բնույթի էդիկտների (հրովարտակների) հետ: Մասնավորապես նրա կողմից 295թ. հրապարակվել են «Ամուսնության մասին» և «Հարկերի մասին», իսկ 297թ.՝ «Մարդահամարի մասին» էդիկտները, որոնցից խիստ դժգոհ է մնացել իմպերիայի ազգաբնակչությունը, հատկապես՝ Իտալիայի և Հռոմի: Հենց դրանց հետ էլ Ե. Կեսարացին և Լակտանցիոսը կապում են Հռոմում և ամբողջ իմպերիայում տեղի ունեցած հուզումների փաստերը[2], որպիսիք մինչ այդ և դրանից հետո չեն նկատվել:

Իր «Կոնստանտինի կյանք»-ը երկի 4-րդ գրքի 26-րդ գլխում՝ կոչվող «Օրենքի ուղղումը, վերաբերող անզավակ մարդկանց, ինչպես նաև ժառանգման մասին օրենքի ուղղումը», Ե. Կեսարացին հաղորդում է, որ Կոնստանտին Մեծը վերացրել է մինչ այդ գործող ժառանգման օրենքի այն նորմը, ըստ որի անզավակ, ինչպես նաև բնությունից զավակածնության անկարող մարդիկ՝ տղամարդիկ և կանայք, իրավունք չեն ունեցել գույք ժառանգել: Մինչ այդ սահմանված է եղել նաև նորմ, ըստ որի ամուսնության տարիքի հասած աղջիկները և այրի կանայք պարտադրված են եղել ամուսնության՝ զավակածնության նպատակով: Կոնստանտին Մեծի կողմից նման անձանց շնորհվել է գույք ժառանգելու իրավունք: Ինչպես նաև նրա կողմից վերացվել կամ ուղղվել է այն նորմը այն մարդկանց նկատմամբ, ըստ որի մարդիկ, «ովքեր մնացած են եղել անզավակ ոչ թե այն պատճառով, որ չեն ցանկացել զավակ ունենալ, այլ զզվանքով են վերաբերել դեպի ամուսնական անկողինը՝ ներծծված լինելով ուժեղագույն սիրով դեպի իմաստությունը, ինչպես նաև մարմնով և հոգով մաքուր և բացարձակապես կույս կանայք, ովքեր իրենց նվիրելով Աստծու ծառայությանը՝ կյանքն անցկացրել են սրբության և ողջախոհության մեջ»՝ ազատվել են ամուսնության և զավակ

[1] Մովսես Խորենացի, Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց, էջ 2193-2194:

[2] Лактанций, О смертях преследователей, Пер. В. М. Тюленевам, СПб., “Алетейя”, 1998, с. 138-139.

ունենալու պարտականությունից: Եվ, «լինելով հետևող առողջ բանականությանը՝ բասիլևսը փոփոխությունների է ենթարկել նաև այդ օրենքը»[1]:

Այսպիսով, ճգնավոր կանայք ու տղամարդիկ, ովքեր մինչ այդ ընդունված օրենքով պարտավոր են եղել ամուսնանալ, Կոնստանտին Մեծի այդ օրենքով՝ ընդունված 312թ., ազատվել են այդ պարտականությունից՝ դադարելով լինել նման հանցագործության սուբյեկտ: Իսկ «այն օրենքը»՝ հիշատակված Ե. Կեսարացու կողմից, որի մեջ այդպիսի «փոփոխություններ» է մտցրել Կոնստանտին Մեծը, ապա դա 295 թվականի սկզբին Դիոկղետիանոս կայսեր կողմից ընդունած էդիկտն է «Ամուսնության մասին»: Ըստ դրա, ամուսնության տարիքի հասած անձինք, հատկապես՝ կանայք, եթե չեն ամուսնացել և երեխաներ չեն ունեցել, ապա խստորեն պատժվել են[2]: Կուսակրոն և վանքերում համատեղ կյանք վարող կանայք և աղջիկները նույնպես պարտավոր են եղել ամուսնանալ և երեխաներ ունենալ[3]: Այդ թվում՝ Հռիփսիմեն, ում Ագաթանգեղոսը կոչում է «մանկամարդ»[4]: Իսկ դա նշանակում է, որ նա եղել է 15-ից 25 տարեկան[5], հետևաբար՝ ենթակա այդ էդիկտի գործողությանը:

Դիոկղետիանոսի «Ամուսնության մասին» էդիկտի մասին Ի. Կնյազկին գրում է հետևյալը. «Դիոկղետիանոսը հրատարակում էր օրենքներ, որոնցով պաշտպանում էր բարոյականության հիմունքները: Իր «constitutiones»-ներից մեկում նա դատապարտում էր ինցեստը, քանզի այն վիրավորում էր անմահ աստվածներին՝ միշտ բարեկամ Հռոմին: Նա իր «Ամուսնության մասին» 295թ. հրամանագրում հաստատեց հին հռոմեական իրավունքի, կրոնի և մորալի նույնությունը: Դրանում ասված է. «Քանի որ մեր բարեպաշտ և աստվածավախ բանականությանը թվում է արժանի պաշտելու այն, ինչը հռոմեական օրենքներով որոշված է որպես մաքուր և սուրբ, մենք համարում ենք, որ չենք կարող ուշադրություն չդարձնել հանգամանքին, որ որոշ մարդիկ անցյալում իրենց դրսևորել են որպես անաստված և անամոթ կերպով: Եթե կա ինչ-որ բան, ինչին պետք է խանգարել կամ պատժել, ապա մեր դարի համար մտահոգությունը մեզ կոչ է անում խառնվել: Անկասկած է, որ

[1] Евсевий Кесарийский, նշվ. աշխ., էջ 103-104: Князкий И. О., Император Диоклетиан, СПб, Алетейя, 2010, с. 55.

[2] Евсевий Кесарийский, նշվ. աշխ., էջ 103-104: Князкий И. О., նշվ. աշխ., էջ 64-74:

[3] Князкий И. О., նշվ. աշխ., էջ 55:

[4] Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 136-137:

[5] Khachatryan A. Samvel, Ghildren, Yoats, Aults and Elders in Zoroastrian and earli Christian Armenia. European Journal of Humanities and Social sciences, № 3, Vienna, 2018, p. 156-165.

միայն այն ժամանակ անմահ աստվածները, ինչպես միշտ, և նույնպես ապագայում, կարող են բարեհաճ լինել դեպի հռոմեական ժողովուրդը, երբ մենք համոզվենք, որ մեր իշխանության տակ գտնվող բոլոր մարդիկ վարում են բարեպաշտ, աստվածավախ, հանգիստ և մաքուր կյանք՝ հետևելով մեր նախնիների սովորույթներին: Դրա համար մենք որոշեցինք. Հոգալ այն մասին, որպեսզի օրինական ամուսնությունը՝ կնքված համապատասպան հին իրավունքին, ինչպես հարգարժան նրանց համար, ովքեր կնքել են այն, այնպես էլ նրանց համար, ովքեր նրանից ծնվել են՝ գտնվեն աստվածավախության պահպանության տակ. Եվ որ սերունդը մաքրված լինի հարգարժան ծնունդով: Դա կբերի նրան, որ ապագայում ոչ ոք չի համարձակվի ենթարկվել անզուսպ կրքերին, եթե իմանա, որ նախկինում նման հանցանքներ գործածները այնքան են կորցրել ներումը, որ նրանց չի թույլատրվում ժառանգության մեջ ներգրավել ապօրինի ծնված երեխային, ինչպես որ նախատեսված է եղել հին հռոմեական օրենքներով՝ ըստ սովորույթի»[1]:

Յա. Բուրկհարդը՝ նույնպես անդրադառնալով Դիոկղոտիանոսի «Ամուսնության մասին» այս էդիկտին, նա բերում է դրա մի հատված, որում ասված է. «Անմահ աստվածները ցուցաբերել են շատ սիրալիր և ջերմ հակվածություն դեպի հռոմեական անունը, ինչպես որ եղել է նախկինում. Եթե միայն մենք հոգանք, որ մեր բոլոր հպատակները վարեն բարեպաշտ, հանգիստ և հլու կյանք: Հռոմի վեհությունը, աստվածների օգնությամբ, կհասնի նոր բարձունքների, եթե միայն բարեպաշտ և ողջախոհ և առաքինի կյանքը դառնա օրենսդրության հենարանը»: Դրանով ամուսնության տարիքի հասած երկսեռ անձանց ամուսնությունը համարվում է բարեպաշտության դրսևորում, և, պարտադիր՝ բոլորի ամուսնության տարիքի անձանց համար[2]: Այս և Ի. Կնյազկիի կողմից Դիոկղետիանոսի «Ամուսնության մասին» էդիկտից կատարած մեջբերումը համահունչ է Տրդատ Երրորդի հակաաղանդավորական (հակաքրիստոնեական) առաջին հրամանագրի նկարագրական մասի սկզբի հետ՝ առկա Ագաթանգեղոսի երկում (128-129-րդ պարբ.-եր): Համեմատելիս անմիջապես էլ պարզ է դառնում, որ դրանք միմյանց հետ անմիջական աղերսներ ունեն[3]: Վերջինիս նշված հրովարտակում օգտագործվել են Դիոկղետիանոսի կողմից իրեն ուղարկված 295թ. «Ամուսնության մասին» օրենքի որոշ դրույթներ: Իսկ դա նշանակում է, որ Դիոկղե-

[1] Князкий И. О., նշվ. աշխ., էջ 55:
[2] Буркхардт Я., Век Константина Великого, М., «Центрполиграф», 2003, с. 133.
[3] Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 84-85:

տիանոսի կողմից իրականում հայոց թագավորին է ուղարկված եղել այդ նորմատիվ բնույթի էդիկտը, և ոչ թե Հռիփսիմյան կույսերին որոնելու, գտնելու և վերադարձնելու անհատական ակտ: Իսկ դրա բովանդակությունը և ձևը մասամբ փոխվել, կույսերին հետապնդելու պահանջ է մտցվել՝ բնորոշ Մաքսիմինոս Դազայի «Ամուսնության մասին» էդիկտին, և դրան վկայաբանության ձև է տրվել հետագայում, Ագաթանգեղոսի երկի խմբագիրների կողմից: Մասնավորապես Դիոկղետիանոսը չէր կարող գրել, որ ինքը Հռիփսիմեին նվիրում է հայոց թագավորին, և որ նա կարող է նրան պահել իրեն: Դա նրա կերպարին հարիր չէ: Բացի դրանից, Հռիփսիմեն ստրկուհի չի եղել, այլ ազնվական, ընդ որում՝ թագավորական ընտանիքից: Հանգամանք՝ վկայված ինչպես Ագաթանգեղոսի երկում, այնպես էլ այլ աղբյուրներում: Եվ հնարավոր չէր նրան նվիրել՝ ըստ հռոմեական իրավունքի: Իսկ Դիոկղետիանոսը խստորեն հետևել է իրավունքին՝ ինչպես իր կողմից հրատարակած ակտերում, այնպես էլ վարքագծում: Դրա վկայությունն է նաև հենց նրա հրատարակած «Ամուսնության մասին» էդիկտը:

Դիոկղետիանոսի «Ամուսնության մասին» էդիկտի բովանդակությունից պարզ է դառնում նաև, որ այն ընդունվել է ոչ միայն հաշվի առնելով իր ժամանակի իրականությունն ու հասարակական անհրաժեշտությունը, երբ զորքը համալրելու տեղական ռեսուրս չկար, և այն համալրվում էր բարբարոսների շրջանում կատարած զորակոչի հաշվին, այլև հաշվի է առնվել «հին հռոմեական օրենքներն ու սովորույթները»: Բանը նրանում է, որ այդպիսի օրենք, իսկապես էլ, նրանից առաջ հրապարակված է եղել մ.թ. 9-րդ թվականին, իմպերատոր Օկտավիանոս Օգոստոսի անմիջական ցուցումով: Դրա հեղինակները եղել են սենատորներ Մ. Պապիոս Միտուլոսը և Գ. Սաբինոս Պոպեուսը: Այն ուղղված է եղել ընտանիքի ամրությանը, ծննդաբերության խթանմանը, և հրատարակվել այն պատճառով, որ անընդհատ մղվող պատերազմների հետևանքով աշխատող և պատերազմող ձեռքերը պակասել, իսկ հարկերը նվազել էին: Եվ պետությունը ստիպված է եղել բանակ զորակոչել ոչ հռոմեացիների՝ բարբարոսների, գերիների և ստրուկների: Հռոմեական լեգեոնների կողքին սկսել էին ձևավորվել օժանդակ զորքեր՝ կազմված հռոմեական, և հարևան տարածքներում բնակվող ոչ լատինացի ցեղերի ու ժողովուրդների ներկայացուցիչներից: Այդ օրենքներում ամուսնությունը հայտարարվել է պարտադիր, հատկապես՝ սենատորական և հեծյալ դասերի ներկայացուցիչ հանդիսացող տղամարդկանց և կանանց համար: Ամուրիների և անզավակների համար քաղաքացիական իրավունքների մեջ

մտցվել են սահմանափակումներ, և սահմանվել տարբեր տեսակի արտոնություններ՝ շատ երեխա ունեցող տղամարդկանց ու կանանց համար (լատինացի): Այդպիսով, խրախուսվել է ամուսնությունը և շատ երեխա ունենալը: Սահմանվել են խիստ պատիժներ՝ ամուսնական դավաճանության (շնության) համար[1]:

Դեմոգրաֆիական առումով վիճակը իմպերիայում շատ ավելի վատթարացած էր մ.թ. 3-րդ դարում, երբ այն ցնցվում էր ժանտախտի բռնկումներից ու տևական պատերազմներից: Նույն դրդումներով՝ հաշվի առնելով նաև սենատորներ Մ. Պ. Միտուլոսի և Գ. Ս. Պոպեուսի հեղինակած օրենքները, Դիոկղետիանոսը հրատարակել է իր «Ամուսնության մասին» օրենքը: Դրանով կրկին ամուսնությունը պարտադիր է հռչակվել ամուսնական տարիքի հասած բոլոր երկսեռ անձանց և այրի կանանց համար, իսկ օրենքը խախտողները չարաչար պատժվել են: Եվ հենց Դիոկղետիանոսի նշված էդիկտում էլ, Կոնստանտին Մեծի կողմից ՝ փոփոխություն է կատարվել: Եվ այդ օրենքից հանվել է պատիժը՝ չամուսնացած լինելու և անզավակության համար:

Դիոկղետիանոսի նշված էդիկտները (հրովարտակները, օրենքները) ամբողջությամբ չեն պահպանվել: Բայց կարելի է ենթադրել, որ Կոնստանտին Մեծը ոչ թե վերացրել է Դիոկղետիանոսի սահմանած պարտադիր ամուսնության նորմը, այլ միայն պատասխանատվությունից ազատել է չամուսնացած կամ ամուսնությունից խուսափող քրիստոնյա ճգնավոր տղամարդկանց, կանանց և աղջիկներին: Կարելի է ենթադրել, որ նրա (Կոնստանտին Մեծի) այդ որոշման պատճառ է հանդիսացել նաև Հայաստանում անմահացած Հռիփսիմյան կույսերի եղերական պատմությունը: Ինչպես պարզվում է «Թուղթ սիրոյ և միաբանութեան...» ժողովածուում հավաքված փաստաթղթերից՝ հայտնի «Դաշնաց թուղթ» անվանմամբ, ինչպես նաև Ագաթանգեղոսի երկից, Կոնստանտին Մեծին, ինչպես նաև Ե. Կեսարացուն, հայտնի է եղել ինչպես Հռիփսիմյան կույսերի կողմից Հռոմից կատարած փախուստի, և նրանց հետ Հայաստանում տեղի ունեցած եղերական դեպքերի, այնպես էլ Գրիգոր Լուսավորչի դատապարտման, նրա քարոզչական գործունեության, և Հայաստանի քրիստոնեացման ամբողջ պատմու-

[1] Машкин Н. А., Принципат Августа. Происхождение и социальная сущность, Изд. АН СССР, М., Л., 1949, с. 421, 443.

թյունը[1]: Որևէ այլ կուսանոց՝ արժանացած նման դաժան բախտի, և որի պատճառը լիներ Դիոկղետիանոսի «Ամուսնության մասին» օրենքը, նշված ժամանակ և դրանից առաջ՝ պատմությանը հայտնի չէ:

«Թուղթ սիրոյ և միաբանութեան...» («Դաշանց թուղթ») հայկական իրավահայտ աղբյուրում, Կոնստանտին Մեծը քանիցս ափսոսանքով հիշատակում է Սուրբ Հռիփսիմեին, որպես իր ազգականուհու՝ քեռու աղջկա, և, նույնիսկ՝ քրոջ, զոհ գնացած հայոց թագավորի հետապնդումներին[2]: Այդ աղբյուրում, ինչպես նաև Ագաթանգեղոսի երկում, և Հռիփսիմե կույսին նվիրված վկայաբանության մեջ, վերջինս համարվում է իմպերատոր Օգոստինոս Օկտավիանոսի (մ.թ.ա. 27, մ.թ. 14թթ.) տոհմից սերած և Կոնստանտին Մեծի ազգականուհի: Իսկ քանի որ Կոնստանտին Մեծի մորական գծով ազգական, իմպերատոր Կլավդիոս Երկրորդ Գոթացին (268-270թթ.) համարվել է Օգոստինոս իմպերատորի հետնորդներից մեկը, ապա այդ կապի հետևանքով էլ Օգոստինոսը, Կոնստանտին Մեծը և Հռիփսիմեն դիտվել են ազգականներ: Չի կարելի բացառել, որ Հռիփսիմեն եղած լինի Կոնստանտին Մեծի մայր Ելենայի ազգականուհին: Վերջինս եղել է քրիստոնեուհի և հովանավորել քրիստոնյա կույսերին, այդ թվում՝ Կոնստանտին Մեծի առաջին կնոջը՝ Միներվինային[3]: Ըստ վերոնշված աղբյուրների, Տրդատ Երրորդ թագավորը՝ Հռոմում տեղի ունեցած Կոնստանտին Մեծի, Սեղբեստրոս Առաջին Հռոմի պապի, բազմաթիվ հոգևորականների ու սենատորների ներկայությամբ, հրապարակավ ընդունել է Հռիփսիմե կույսի հետ ամուսնանալու իր ցանկության, նրան կտտանքների մատնելու և մահվան դատապարտելու փաստը, և խորապես զղջացել իր կատարած այդ արարքի համար[4]:

Ըստ Է. Գիբոնի, Կոնստանտին Մեծը նաև օրենքներ է ընդունել, որոնցով 25 տարին չլրացած աղջիկների ու կանանց նկատմամբ ուժ գործադրելու, կամ հրապուրելով նրանց հետ կենակցելու ու լքելու կապակցությամբ սահմանել դաժան պատիժներ: Նմանները կենդանի այրվել են[5]: Հայոց

---

[1] Շահնազարյան Կ., Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, Փարիզ, 1862:

[2] Շահնազարյան Կ., նշվ. աշխ., էջ 16:

[3] Timothy D. Barnes, Constsntine Dinasty, Religion and Power in hhe later Roman Empire& Willey Blachwell, 2011, P.48-49, 69; Френк Джилл Слотер. Великие властители. Константин Великий. Чудо пылающего креста. «Армада», 1997.

[4] Շահնազարյան Կ., նշվ. աշխ., էջ 16, 20, Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 486-487:

[5] Гиббон Эдуард, Упадок и разрушение Римской империи М., «Центрполиграф», 2005, с. 162.

սուրբ կույսերի պատմության ազդեցության տակ լինելու պատճառով է նաև, որ նա սկսել է հատուկ ուշադրություն դարձնել ճգնավորների հիմնահարցին, նրանց կարիքներին: Ինչպես գրում է սուրբ Աթանասը, նա նամակագրության մեջ է եղել եգիպտացի ճգնավոր սուրբ Անտոնիոսի հետ, խրախուսել նրա ճգնավորական կյանք վարելու հանգամանքը[1]: Հենց Հռիփսիմյան կույսերի հետ կապված դեպքերի ազդեցության տակ, քրիստոնեական ճգնավորական գաղափարների ու այդ շարժման շահերից ելնելով՝ նա հրապարակել է իր այդ օրենքները: Պետք է նշել նաև, որ Կոնստանտին Մեծի ամբողջ ռեֆորմացիոն գործունեությունը հետևանք և ազդեցություն է հայաստանյան դեպքերի՝ կապված այդ երկրի քրիստոնեացման պրոցեսների կատարվող դեպքերի հետ: Հանգամանք, որը չի գիտակցվել գերմանացի պատմաբաններ Յա. Ֆոգտի, Յա. Բուրկհարդի, կրոնագետ Ա. Հարնակի և այլոց կողմից:

Բացի Դիոկղետիանոսի «Ամուսնության մասին» հիշյալ էդիկտից, Հռիփսիմյան կույսերի փախուստի և Հայաստան գալու պատճառ կարող էր լինել և եղել է այդ իմպերատորի կողմից 295թ. ընդունած «Հարկերի մասին» օրենքը: Մինչ այդ իմպերիայում գանձվել է միայն բնամթերային հարկ՝ կոչվող աննոնա: Այն գանձվել է ոչ կանոնավոր և ոչ ռեգուլյար կերպով, ըստ պահանջի, կարիքի և անհրաժեշտության՝ Հռոմ քաղաքի, պալատի, պետական ծառայողների և զորքի կարիքները հոգալու համար: Ընդ որում, մինչև Դիոկղետիանոսի իշխանության գալը, Հռոմ քաղաքի բնակիչները և իտալացիներն ազատված են եղել հարկերից կամ ունեցել հարկային մեծ արտոնություններ: Եվ այս էդիկտով նրանց հարկադրման է ենթարկել Դիոկղետիանոսը: Դրանով նա իրականացրել է բանակի ու պետական տարածքային կառուցվածքի (նահանգները 50-ից դարձել են 100), արմատական ռեֆորմներ: Դրա հետևանքով բանակի զինվորների, ինչպես նաև նահանգների պաշտոնյաների թվաքանակը կրկնապատկվել է: Պետական ապարատի կտրուկ ուռճացումից հետո դրամական միջոցների խիստ կարիք է առաջացել: Դա էլ հանգեցրել է ռեֆորմների՝ նաև հարկային-ֆինանսական ոլորտում: «Հարկերի մասին» այդ օրենքով հողը բաժանվել է ըստ կադաստրային արժեքի՝ հաշվի առնելով դրանց տեղադիրքը, ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը, բերքատվության չափը, մշակաբույսերի, անասունների

[1] Афанасий Великий, Житие св. Антония // Афанасий Великий. Творения. Т. 3, СПб., 1903, с. 240.

տեսակը, քանակը և այլն: Հողագործության ոլորտում, որպես հարկման միավոր, ընդունվել է յուգան (iuga), իսկ անասնապահության ոլորտում՝ անասունների տեսակը, քանակը:

Դրա հետ միասին և նույն ժամանակ ընդունվել է վերոնշված օրենքին հարակից «Գլխահարկի մասին» օրենքը: Ըստ դրա ազգաբնակչությունը բաժանվել է հասակային խմբերի՝ անկախ դասային և սեռական պատկանելությունից, և հարկադրվել գլխահարկով («capita»՝ ծագած լատիներեն «caput»-«գլուխ» բառից): Կ. Շահնազարյանը՝ «Դաշանց թղթի...» մասին իր հայտնի աշխատության մեջ, գլխահարկը միամտորեն համարում է որպես թուրքական սուլթանների կողմից 15-16-րդ դարերում մտցված հարկատեսակ, և դրա մասին հիշատակությունը նշված պատմական փաստաթղթում համարում դրա կեղծ լինելու ապացույց[1]: Բայց դա ոչ միայն այդպես չէ, այլև ճիշտ հակառակն է: Գլխահարկը իմպերատոր Դիոկղետիանոսի հայտնագործությունն է: Տարբեր նահանգներում Դիոկղետիանոսի հարկային օրենքների գործողությունն ունեցել է առանձնահատկություններ, դրսևորվել տարբեր կերպ, բայց սկզբունքը եղել է նույնը: Եգիպտոսում հաշվառվել և հարկման են ենթարկվել միայն 14-ից մինչև 65 տարեկանները: Սիրիայում՝ կանայք 12-ից 65, իսկ տղամարդիկ՝ 14-ից 65 տարեկանները: Հետագայում այդ երկու հարկատեսակները միավորվեցել են իրար հետ և կոչվել կապիտացիա-յուգացիա (capitatio iugatio)՝ տարածվելով ամբողջ իմպերիայի, այդ թվում՝ Իտալիայի նահանգների ու Հռոմ քաղաքի ազգաբնակչության վրա:

Բացի այդ օրենքներից, 297 թվականին, Դիոկղետիանոսի կողմից ընդունվել է ևս մեկ ունիկալ օրենք՝ կոչվող «Մարդահամարի մասին», որը նույնպես նրա հայտնագործությունն է: Դրանց հիման վրա գյուղական, հետո նաև քաղաքային բնակչությունը՝ արհեստավորները, առևտրականները և արդյունաբերողները, հաշվառվել, և որից հետո միայն հարկադրվել են: Դրանով հարկահանության գործը կանոնավորվել է: Պետք է նշել, որ այս ռեֆորմները հանգեցրել են մեծ հուզումների, որոնց մասին արդեն իսկ նշվել է: Հենց այս էդիկտների հիման վրա, և պարտադիր կերպով ամուսնանալու, հարկեր վճարելու պահանջներով՝ հարկահանները Հռոմում մտել են կույսերի վանք, և իրականացրել նշված օրենքներից բխող որոշակի գործողություններ:

[1] Շահնազարյան Կ., Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, Փարիզ, 1862, էջ 25:

Վերոնշված այս երեք օրենքներն էլ ստիպել են Հռիփսիմյան սուրբ կույսերին դիմել փախուստի և գալ Հայաստան: Եվ դա, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել 297 թվականին: Հասկանալի է, որ 293 թվականին կույսերը չէին կարող Հռոմից փախչել, ինչպես ենթադրում է Ղ. Ալիշանը, քանզի նշված ժամանակ քրիստոնյաները Հռոմեական իմպերիայում չեն հետապնդվել: Հայաստանի մեծ մասն էլ գտնվելիս է եղել պարսկական գերիշխանության տակ, պատերազմական վիճակում, և այնտեղ պատսպարվել հնարավոր չէր: Նրանք չէին կարող փախուստի դիմել նաև 295-296թթ. և նավով գնալ Ալեքսանդրիա, որը եղել է Հռոմից փախչելուց հետո նրանց առաջին հանգրվանը: Քանզի այնտեղ 286թ. տեղի էր ունեցել ապստամբություն, և մինչև 296 թվականի օգոստոս ամիսը, ամբողջ 10 տարի, այդ քաղաքը գտնվելիս է եղել ոմն Էլպիդիոս Աքիլլեսի տիրապետության տակ: Դիոկղետիանոսն էլ, 295 թվականի գարնանը, Նիկոմեդիայից եկել է Սիրիա և Պաղեստին, որտեղ նա պատերազմ էր նախապատրաստում Իրանի դեմ: Այնտեղից էլ՝ Իրանի դեմ պատերազմի գործը հանձնարարելով իմպերատոր Գալերիոսին ու Տրդատ Երրորդին, նա զորքով շարժվել է Եգիպտոս, 296թ. մարտ ամսին պաշարել Ալեքսանդրիան, այն գրավել ութ ամիս հետո: 286թ. ամռան վերջին նա վերադարձել է Սիրիա, որտեղ արդեն ընթանում էր պատերազմն Իրանի դեմ[1]: Այդ պատերազմի առաջին ճակատամարտում՝ տեղի ունեցած Խառանի մոտ, պարսիկները հաղթել են: Դրանից հետո հռոմեական և հայկական զորքերը՝ փոխելով մարտավարությունը, Իրանի վրա հարձակվել են ոչ թե Միջագետքի, այլ Հայաստանի վրայով (ինչպես 283թ.՝ Կարոս իմպերատորը՝ Տրդատ Երրորդի օգնությամբ): Նրանք վերջնականապես պարսիկներին հաղթել և 297թ. կնքել են Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագիրը: Հայաստանն ազատագրվել և հանձնվել է Տրդատ Երրորդին, որից հետո տարածաշրջանում հաստատվել է խաղաղություն:

Այսպիսով, սուրբ կույսերը միայն 297 թվականին, «Մարդահամարի մասին» օրենքի ընդունումից հետո՝ կարող էին փախչել Հռոմից, նավով հասնել արդեն իսկ խաղաղեցված Ալեքսանդրիա, հետո՝ Պաղեստին, իսկ այնտեղից էլ՝ Հայաստան: Եվ դա չէր կարող տեղի ունենալ 295-296թթ., քանզի այդ ժամանակ և ամբողջ ճանապարհին, տեղի էին ունենում պատերազմական գործողություններ, զորաշարժեր, և այդ ճանապարհը նրանց

[1] Буркхардт Я., նշվ. աշխ., էջ 63, Джордж Бейкер, նշվ. աշխ., էջ 69, 71:

համար չէր կարող անվտանգ լինել: Ավելի ուշ ևս նրանք չէին կարող փախչել Հռոմից, քանզի այնտեղ մնալը նրանց համար դարձել էր անհնարին:

Ըստ Մովսես Խորենացու «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց...» վկայաբանության և Ղևոնդ Ալիշանի «Արշալոյս քրիստոնեութեան հայոց» աշխատության, Հռոմից փախչելուց հետո կույսերը նավով հասել են Ալեքսանդրիա, այնտեղից՝ Պաղեստին, այցելել Քրիստոսի երկրային կյանքի ու քարոզության հետ կապված սրբավայրեր, որից հետո էլ՝ Եդեսիայի վրայով, անցել բուն Մեծ Հայաստան: Այնտեղ նրանք քարոզել են տարբեր գավառներում՝ Դարանաղիում, Բզնունյաց, Բերկրիի, Տմորիքի, Տոսպի, Եկեղյաց և այլն, այդ վայրերում կառուցել խրճիթներ, գետնափորներ ու դրանցում բնակվել տևական ժամանակ: Այնուհետև նրանք՝ Վարագ լեռան լեռնախորշերում որոշ ժամանակ ապրելուց հետո, եկել են Վաղարշապատ մայրաքաղաք և բնակվել հնձաններում[1]: Ինչքան ժամանակ է տևել նրանց ճանապարհորդությունը մինչև Վաղարշապատ, և երբ է տեղի ունեցել Հռիփսիմեի ու որոշ կույսերի մահապատիժն այնտեղ՝ դժվար է ասել: Դա կախված է Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապում գտնվելու ժամանակի տևողությունից: Ագաթանգեղոսի երկում այդ ժամանակը մի դեպքում նշվում է 13 (պարբ. 124), մեկ այլ դեպքում՝ 15 տարի (պարբ. 247)[2]:

Քանի որ Տրդատ Երրորդը Կարոս իմպերատորի կողմից հայոց թագավոր է օծվել 282-283թթ., արևմտյան ճակատում, որի մասին վկայում է Ագաթանգեղոսը, և որից հետո նրանք միացյալ զորքով տեղափոխվելով արևելյան ճակատ՝ Հայաստանն ամբողջապես ազատագրել են 283թ. և համարվել է, որ դա արվել է վերջնականորեն (այդպես էլ կլիներ, եթե Տիգրիսի ափին Կարոսը հանկարծամահ չլիներ), ապա այդ տարի էլ՝ 283թ., Գրիգոր Լուսավորիչը նետվել է Խոր Վիրապ և դրանից ազատվել 15 տարի հետո, 298թ.: Ավելի ուշ, երբ հռոմեական և հայկական զորքերը նահանջում էին, և 284թ. դուրս եկան Մեծ Հայաստանի, հատկապես՝ դրա արևելյան տարածքներից, այդ թվում՝ Վաղարշապատ և Արտաշատ քաղաքներից, ապա հնարավոր չէր լինի Գրիգոր Լուսավորչին դատապարտել և նետել Արտաշատի միջնաբերդի Խոր Վիրապը:

Վերոնշված ապացույցներին համահունչ են հայկական վերոնշված աղբյուրների պարունակած տեղեկություններին այն մասին, որ Հռիփսիմյան

---

[1] Մովսես Խորենացի, «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց», էջ 2193-2196, Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 110-136:

[2] Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 78-79, 136-137:

կույսերի ճանապարհորդությունը Հռոմից մինչև Հայաստան, և այնտեղ նրանց կողմից կատարած քարոզչական գործունեությունը, տևել են տարիներ: Դրանց համադրումից կարելի է գալ հետևության և ապացուցված համարել, որ նրանք, Հռոմից փախուստի դիմելուց հետո՝ Ալեքսանդրիայի, Պաղեստինի, Սիրիայի վրայով հասել են Մեծ Հայաստան, և դրա հարավ-արևմտյան գավառներում ապրել ու քարոզել մինչև 298թ. ձմեռ: Այնուհետև, Վարագ լեռան մոտերքից, նրանք եկել են մայրաքաղաք Վաղարշապատ, և ձմռանն ու վաղ գարնանն այնտեղ զբաղվել ապակյա հուլունքների արտադրությամբ, վաճառքով ու քարոզությամբ: Միայն այդ ժամանակ նրանց կողմից հնարավոր կլիներ ապրել հնձաններում: Եվ այնտեղ էլ, ստանալով Դիոկղետիանոսի հրովարտակն ու իր ծառաների հաղորդումը Հռիփսիմեի գեղեցկության մասին, Տրդատ Երրորդ հայոց արքան որոշել է նրա հետ ամուսնանալ, խնամխոսներ է ուղարկել, սակայն Հռիփսիմեից տանալով կտրուկ մերժում, նրան հարկադրաբար բերման է ենթարկել իր պալատ, և փորձել նրա հետ կենակցել, ինչը չի հաջողվել: Հռիփսիմեն թագավորին դիմադրել է, որն ինքնին հանցագործություն է: Դրա ընթացքում Հռիփսիմեի կողմից կատարվել են մի շարք այլ հանցագործություններ ևս, որոնց համար նա մահապատժվել է՝ զրադաշտական իրավունքով նախատեսված արարողակարգերով[1]: Դրա հետ միասին պետք է նշել, որ հայոց թագավորն իսկապես էլ ցանկացել է ամուսնանալ Հռիփսիմեի հետ, նրան տալով հարճի կամ չակար կնոջ կարգավիճակ[2]: Եվ նրա իրականացրած բռնությունը պայմանավորված չէ ստոր սեռական դրդումներով, ինչպես որ եղել են իմպերատորներ Մաքսիմինոս Դազայի և Մաքսիմիանոս Հերկուլիոսի կողմից իրականացված մասայական սեռական բնույթի բռնությունները՝ ամուսնացած կանանց և աղջիկների նկատմամբ:

Այսպիսով, «Հռիփսիմյան կույսերի Հռոմից փախուստի դիմելու և Հայաստան գալու պատճառների շուրջ» աշխատանքում հիմնավորվում է, որ նրանք Հռոմից փախուստի դիմել և Հայաստան են եկել ոչ թե Դիոկղետիանոսի (կամ որևէ մեկ այլ կայսեր կամ իմպերատորի) կողմից Հռիփսիմեի կույսին անհատապես հետապնդելու, այլ իմպերատոր Դիոկղետիանոսի կողմից 295թ. հրապարակած «Ամուսնության մասին», «Հարկերի մասին» և

[1] Хачатрян С. А., Зороастрийский погребальный обряд над престаупниками в дохристиагской Армении, EESJ. East European scence Journal, № 1 (52), 2020, part 6, Warsaw, Poland, с. 62-67.

[2] Периханян А. Г., Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды. М., 1983, с.79-113:

297թ. «Մարդահամարի մասին» էդիկտների ու դրանց գործողության հետևանքով: Համաձայն «Ամուսնության մասին» օրենքի Հռիփսիմեն և այլ երիտասարդ կույսեր կամ այրի կանայք որդեծնության նպատակով պարտավոր էին ամուսնանալ, և որպես արհեստագործությամբ զբաղվորներ վճարել գլխահարկ և եկամտահարկ: Թեև նրանց վանքը եղել է արհեստագործական, բայց արհեստով զբաղվել են քչերը: Դրա եկամուտը եղել է չնչին՝ ուղղված միայն կույսերի գոյության պահպանությանը, որպեսզի կարողանան շրջել և քարոզել ավետարանները: Եվ դրա նպատակը չի եղել շահույթ ստանալը, բարեկեցիկ կյանք վարելը, ինչպիսին որ է սովորական տնտեսվարման դեպքում: Դրա համար նրանք չէին կարող նաև հարկեր վճարել: Մարդահամարի օրենքի արդյունքում էլ, երբ հարկահանները, ովքեր, ըստ Յա. Բուրկհարդի՝ «աչքի են ընկել բացառիկ անխղճությամբ»[1], իրավունք են ստացել մտնել հարկատուների տները (այդ թվում՝ այս վանք), գույքագրել ունեցվածքը, և գլխահարկի ենթակելու համար հաշվառել նրանց, ապա սուրբ կույսերի միակ ելքը մնացել է Հռոմեական իմպերիայից փախուստի դիմելը և Հայաստան գալը: Հռիփսիմեն էլ հետապնդվել է ոչ թե հասցեականորեն, այլ որպես աղջիկ՝ պարտավոր ամուսնանալ որդեծնության նպատակով: Հայաստանում էլ Հռիփսիմեի, Գայանեի և այլ ճգնավոր կանանց հետ տեղի է ունեցել այն շրջադարձային դեպքը, որը ցնցեց Հայաստանն ու ամբողջ աշխարհը:

ON THE REASONS FOR THE ESCAPE OF ST. HRIPSIME AND A GROUP OF NUNS FROM ROME AND THEIR ARRIVAL IN GREATER ARMENIA

KHACHATRYAN SAMVEL
Doctor of Law, Associate Professor, *GSU Lecturer*
e-mail: khachatryan08@mail.ru

The book of the early 4th century historian Agatangelos “The History of Armenia” tells about the escape of St. Hripsime and a group of nuns from Rome to the capital of Greater Armenia, Vagharshapat, where she and some of the nuns perished at the hands of the Armenian King Tiridates III. Agatangelos explicates this event in the form of a literary genre of the lives of the saints. He claims that they were forced to escape because of emperor Diocletian’s desire to marry beautiful

[1] **Буркхардт Я.**, նշվ. աշխ., էջ 164:

Hripsime. Therefore, this story is considered a myth or an event devoid of historical significance and meaning.

The article substantiates that the real reason for Hripsime and the nuns' escape was the laws of emperor Diocletian "On marriage", "On taxes" of 295 AC, as well as "On the populationcensus" of 297 AC. Under these laws, all girls of marriageable age, unmarried women and widows were obliged to marry for the purpose of childbearing. Also, all girls and women were required to work and pay taxes, including the poll tax (Diocletian's invention). The nuns, with rare exceptions, were allowed to work and, according to the monastery's charter, were not allowed to marry.

It is proved in this work that the arrival of St. Hripsime and a group of nuns to Greater Armenia and their death is not a myth, not an invention, but a real fateful occurrence, which became the reason for the start of great Christian revolution in Armenia, and then the complete Christianization of the Armenian people, the state and the law.

Key words: *Agatangelos, Diocletian, Maximin Daza, Tiridates III, Gregory the Illuminator, Hripsime, Gayane, Monastery, Roman Empire, Greater Armenia.*

О ПРИЧИНАХ ПОБЕГА СВЯТОЙ РИПСИМЭ И ГРУППЫ МОНАХИНЬ ИЗ РИМА И ИХ ПРИХОДА В ВЕЛИКУЮ АРМЕНИЮ

ХАЧАТРЯН САМВЕЛ
Кандидат юридических наук, доцент,
преподаватель ГГУ
электронная почта: khachatryan08@mail.ru

В книге историка начала 4-ого века Агафангела «История Армении» повествуется о побеге святой Рипсимэ и группы монахинь из Рима в столицу Великой Армении Вагаршапат, где она и часть монахинь погибли от руки армянского царя Тирида Третьего. Агафангел излагает это событие в форме литературного жанра жития святых. Он утверждает, что причиной их побега стало желание Диоклетиана жениться на красавице Рипсимэ. Поэтому эта история считается мифом или лишенным исторического значения и смысла событыем.

В статье обосновывается, что действительной причиной побега Рипсимэ и ее подруг-монахинь стали законы императора Диоклетиана «О браке», «О налогах» 295г., а также «О переписи населения» от 297г. По этим законам всем девушкам брачного возраста, незамужним женщинам и вдовам вменялось в обязанность вступить в брак с целью деторождения. Также все девушки и женщины были обязаны работать и платить налоги, в том числе - подушный налог (изобретение Диоклетиана). Монахини же, за редким исключением, не работали и по уставу монастыря не могли вступать в брак.

Доказывается, что прибытие св. Рипсимэ и группы монахинь в Великую Армению, их гибель там является не мифом, не выдумкой, а действительным судьбоносным событием, которое стало поводом для начала великой христианской революции в Армении, а затем полной христианизации армянского народа, государства и права.

Ключевые слова: Агафангел, *Диоклетиан, Максимин Даза, Константин Великий, Тиридат Третий, Григор Просветитель, Рипсимэ, Римская империя, Великая Армения.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 19.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 02.10.2021թ.: